Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«16» ապրիլ 2019թ N – Ա

ՈՐՈՇՈՒՄ

«ԻՐԻՆԱ ՌՈԴՆԻՆԱՅԻ ԳԵՂԱՍԱՀՔԻ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ և 23-րդ կետերով՝ Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. «Իրինա Ռոդնինայի գեղասահքի մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանափոխել «Երևանի Սառցե Պալատ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության:
2. Հաստատել «Իրինա Ռոդնինայի գեղասահքի մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:

ԼՈՒՅՍ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԻՐԻՆԱ ՌՈԴՆԻՆԱՅԻ ԳԵՂԱՍԱՀՔԻ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

«Իրինա Ռոդնինայի գեղասահքի մարզադպրոց» համայնքային ոչ առեվտրային կազմակերպությունն անվանափոխելու եվ կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման դեպքում երևան քաղաքի բյուջեում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԻՐԻՆԱ ՌՈԴՆԻՆԱՅԻ ԳԵՂԱՍԱՀՔԻ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրինա Ռոդնինայի գեղասահքի մարզադպրոց» համայնքային ոչ առեվտրային կազմակերպությունն անվանափոխելու եվ կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջացնում:

ԼՈՒՅՍ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԻՐԻՆԱ ՌՈԴՆԻՆԱՅԻ ԳԵՂԱՍԱՀՔԻ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Իրինա Ռոդնինան ում անունով անվանակոչվել է Երևանի գեղասահքի մարզադպրոցը և ով հանդիսանում է Ռուսաստան-Հայաստան միջխորհրդարանական հանձնաժողովի նախագահի տեղակալ փետրվարի 26-ին մասնակցել է Ադրբեջանի մայրաքաղաք Բաքվում տեղի ունեցած երթին, որը կրել է վառ արտահայտված հակահայկական բնույթ և ուղղված է եղել տարածաշրջանում խաղաղության և կայունության խաթարմանը: Իրինա Ռոդնինան մասնակցելով այդ միջոցառմանը իր հարցազրույցում միակողմանի դիրքորոշում է հայտնել 1992թ. Խոջալու գյուղում տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ, դրանով իսկ փաստելով, որ իր մասնակցությունը այդ երթին տեղի է ունեցել ոչ հանգամանքների բերումով:

Ելնելով վերոգրյալից առաջարկվում է անվանափոխել գեղասահքի մարզադպրոցը՝ արտահայտելով Երևանի ավագանու և ներկայացված քաղաքական ուժերի անհամաձայնությունը Ռոդնինայի հնչեցրած դիրքորոշումներին:

ԼՈՒՅՍ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հավելված
Տպագրված է ընդամենը 5 օրինակ
Օրինակ _____
/կազմված _____ 2019թ.
և բաղկացած՝ 2 էջից/

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ

_____

N _____ ՈՐՈՇՄԱՄԲ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

_____Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ԳՐԱՆՑՎԱԾ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ
ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ
02.05.2012թ.
Գրանցման թիվ՝ 222.215.95140
Վկայական՝ 03 Ա 245140
ՀՎՀՀ՝ 02253207
02.05.2012թ.-ին գրանցված կանոնադրության Թիվ _____ փոփոխությունը գրանցված է Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործկալության կողմից
«_____» _____ 2019թ.

_____

«ԻՐԻՆԱ ՌՈԴՆԻՆԱՅԻ ԳԵՂԱՍԱՀՔԻ
ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ
ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
/Փոփոխություն/

ԵՐԵՎԱՆ 2019

«Իրինա Ռոդնինայի գեղասահքի մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Կանոնադրության տիտղոսաթերթում և 1.1 կետում «Իրինա Ռոդնինայի գեղասահքի մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն» բառերը և դրանց համապատասխան հոլովաձևերը փոխարինել «Երևանի Սառցե Պալատ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն» բառերով և դրանց համապատասխան հոլովաձևերով,

2. Կանոնադրության 1.10 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1.10 Կազմակերպության անվանումն է՝

հայերեն լրիվ՝ «Երևանի Սառցե Պալատ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն,

հայերեն կրճատ՝ «Երևանի Սառցե Պալատ» ՀՈԱԿ,

ռուսերեն լրիվ՝ « Ледовый Дворец Еревана» общинная некоммерческая организация,

ռուսերեն կրճատ՝ «Ледовый Дворец Еревана» ОНКО,

անգլերեն լրիվ՝ «Yerevan Icy Palace» community non commercial organizacion.

անգլերեն կրճատ՝ «Yerevan Icy Palace» CNCO.

Սույն փոփոխությունը հանդիսանում է 02.05.2012թ. պետական ռեգիստրում գրանցված «Իրինա Ռոդնինայի գեղասահքի մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության անբաժանելի մասը:

ԼՈՒՅՍ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ